

պատմական կոռւան մ'է, այլեւս կ'արժէ լրջօրէն զբաղիլ փոքր Հայքի քանի մը խումբ նահատակներու վարքերով ալ որոնք անհրաժեշտ են ըստ իս մեր եկեղեցական պատմութեան համար և զանոնք անտեսելու չգործածել իբր մասնակի լուսարանողներ՝ շատ կարեւոր պակաս մը պիտի գործուի։ Այս վարքերէն առաջին տեղը կը բռնեն, Ս. Պողոկոստիւնը, Մելիտիոնէի 45 վկայիցը, Ս. Եւստոստիոսեանց և Ս. Փառասուն Մանկանցը, որոնք հայախօս սուրբերէն էին և սերտ յարաբերութիւն ունէին մայր Հայրենիքի հետ և իրենց վկայաբանութիւններն ալ հարազատ։

Հ. Վ. ՅՈՎԱՆՆԵՍԻԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԿԱՐՄԻՐ ՀՐԱՐՈՒԽՆ

ԿԱՆԱՋ ԴԱՇՏՆ ՇԻՐԱԿԻ

ԿԱՊՈՅՏՆ ԱՐԱԳԱՅ

Հայաստանի սիրելի ամիսն եղած է միշտ Նաւասարդն, վասն զի ժողովելու, հանգստի և վայելելու եղանակն է։ Մարտի դիշերաւ հաւասարին Ուրանիա բանալով գարնան դռներն, ջերմաշունչ Հարաւային հողմն ձըմբան սփռած սպիտակ ծածկոցը վերցնելով, շունչ և կենդանութիւն կու տայ քնած երկրին։ Արեւի ջերմութեամբ գետնի վերծխող գոլորշեաց մէջէն ձնծաղիկը կը բանայ ծառի աղւնկները հողի պատուածքներէն և կը դիտէ կապոյտ երկնքին մեղոյշ ժպիտը։ Իսկ մայր երկիրը փայլուն խոփէն պատառուած կ'ընդունի իր արգասանք ծալքերի մէջ սերմացանի լիարուն սփռած սերմանիքը։ Բարբար երկինք վերէն արեւ կը ճաճանչէ,

ստորեւ Թաթաւուչ ամպերէն կը ցօղէ լուսափայլ ցօղն առաւօտին, և կամաց անձրեւ շառագունած երեկոյին։ Հողը կը քօշուի, կը խորխուի, դեղին ծիլ կ'արձակէ, կը հազնի կանաչ և կապէ գլուխ հասկաթուռ։ Նաւասարդի արշալոյսին Հարսնաքարէն եկած հողմով՝ ալէնման կը ծածանի ոճին կանգնած վարսաւոր ցորենն Շիրակի դաշտերու, արտերու երեսին։ Քաղի հունձի ժամանակ է, խնկագուններ է ցորենն. այժմ քրտնաթոր, աշխատութեան հատուցումը կը ժողվէ հողագործ մշակը։ Հայկ համաստեղութիւնը կ'երեւի Հայաստանի հորիզոնին վրայ. աւանորաբեր ամսոյն սկիզբն՝ Հայոց Նաւասարդն է, ոչ միայն քաղաքական այլ և կրօնական Անահիտի՝ պաշտպանին Հայաստան երկրին։ Շիրակայ դաշտի արտերու մէջ բարդեր և եղններն Թափեր են խիտ առ խիտ, իբրեւ համատարած բանակի անթիւ, անհամար գունդեր, նոքա են զօրութիւն, ուրախութիւն և անվկանդ յոյս գիւղացւոյն։ Կալերն լեցուած են որայով, կամբը կը դառնան երեխաներու ճուլըցով, իսկ տաւնուտէրը նստած դիզի քով, իր կենանքի շրջաօլի օղակներն իրարու ետեւ մտքէն կը սահեցնէ, է որ յայտը, է որ ձախորդ օրեր եկեր և անցեր են և դեռ լաւագունին յոյսն և որդիներու կանաչահասակ պարը կը սփռուի սիրտն և կը թեթեւցնէ կրած աշխատանքը։ Դէ՛հ, տղէք ջան, քէ՛ք կամբը, որպէս զի այսօր թեղեցը կալը, երկու օրուան ալիւր մնացեր է տունը։

Նաւասարդի ամսուն Շիրակի ո՞ր մէկ գիւղէն անցնիս՝ կը տեսնես սալեր բարձած որայով կալը կը մտնեն ճանչելով ոչ միաւար, այլ փոփոխակի ելեւէջներով, կ'երթայ դիզի ոտքը կը կանգնի, հոն մէկը եղանով կու տայ խորձեր, միւսը բանեցիկով կ'առնէ և արուեստով կը շարէ, դէքը երթալով կը

1. Քննական բովանդակ անցած հարազատ վարքեր հրատարակած են արդի բազմաթիւ քննադատներ։ Տես Achaelis. Die Martyrologien, ihre Geschichte und ihr Werth - Berlin 1900. — Quentin H. Les Martyrologes historiques du moyen âge. Paris 1908. — Rodolf Knopf. Ausgewählte Martyre-acten. Tübingen u. Leipzig, 1901. — O. Von

Gebhardt. Acta martyrum selecta, ուր՝ Քառասնից կտակէն զատ կայ նաև անոնց հարազատ վկայաբանութիւնը որուն հայ Թարգմանութիւնն ալ ունիւնք, ինչպէս վերն յիշեցինք։ Ուրիշներ չենք են հարազատ վկայաբանական ցուցակներ. ինչպէս՝ G. Krager, A. Harnack, ևայլն։

բարձրանայ: Ուրիշներ կալի մէջ քանդե-
լով դիզի ոտքը, խուրձեր կը քաշեն կալի
մէջ, կեմեր կը քանդեն, մշակներ երկմը-
տենին ձեռքերին աշան կ'անեն ու կամեր
լծած վրան կը պտըտցնեն. միւս կողմ կա-
ռափ լծած կալը կը քաշեն, կը թեղեն, կը
սպասեն հովին և երեկոյեան արեւմտեան
ժամուն, կամ երբ Բոլլիքն երեւի, կը սկսի
զով զեփուռն փշել, շնկօն է որ պիտի գայ,
այն ժամուն հոսելին ձեռքը՝ մշակն թեղի
գլուխն կ'ըլլէ, անոր կը հետեւին երկուք և
երեք, քամու ալեաց հետ վեր կը հոսեն
յարդն ցորենով, երան երան կը տանի հովն
յարդն ու մոեղն, իսկ ցորենն կարմրհատիկ
կը թափի թեղի ճակատին. արեւածագին
արդէն թեղն հանած պոծած են, և կանա-
նիք շեղի՞ գլուխ կանգնած սառատով և
քարմաղով կը մաղեն. մէկ կողմ խզուզը լը-
ցած, միւս կողմէն քուրձեր լցած շալակ
շալակ կը կրեն հորի բերան, մէկը ներս
մտած բոլորմիկ կուզը կու տայ գարմա-
նով, մինչ վերէն քուրձի բերնէն ներս կը
սուրցնէ ցորենն՝ բռնած մէկ քունջէն՝ մինչեւ
որ հորն գլխի, զգուշութեամբ հորի բերանը
կը շինեն և կը կնքեն քարերով, և կը մը-
նայ մինչեւ գարուն:

Այս եւ ու զեւ աշխատութեանց մէջէն
Նաւասարդի վերջին օրերուն մէկը, անցանք
ընկերներով բարձրանալու Արագած լեռան
կատարը: Գեղեցիկ եղաւ բոլոր օրը, այդ
անմոռանալի օրն էր Օգոստոս 28ն, և մենք
առաւօտեան տասին Հիւսիսային ճակատի
ալիսկողման սարահարթ դադաթի ծայրն
արեւի տակ նստած էինք բարձրագագ վիմէ
աթոռներով վրայ: Աքանչելի էր տեսարանը,
հորիզոնը չուրջանակի, որչափ աչքը կտրէր,
պարզ, մաքուր, թափանցիկ օդով հազարա-
ւոր ասպարէզ կը տեսնուէր հեռուներ: Գէպ
ի հիւսիս, կովկասի լեռնաշղթան, իբրեւ ամ-
բարտակ հսկայախորիստ կ'ամբառնար յան-
հաս բարձունս, որոց միջէն վեր կը ցցուէին
կազրէիկ և լշպրուզի պաղպաղուն ճակատ-
ներն. արեւմտակողմն փոքր կովկասու կոշ-
ուած սարերն մինչեւ Սեւ Ծով, մինչեւ նըշ-
մարելի էին ջրի երեսի վրայ ցոլացումներ
և փայլատակումներ: Հարաւէն մինչեւ Ար-

զրուայ սահմաններն, ուսկից քաղաքի բը-
նակիչներն իրենց կողմէն կը տեսնեն զԱ-
րագածն, և կոշեր են — Սիմէրլի-Տաղ.—
Արեւելեան կողմէ հարակերտ Մեծն Ագատն
Մասիքն, և իւր յորսայսեալ փռուած Այ-
րարատեան դաշտն՝ Ղազար ֆարպեցոյ նը-
կարագրած անձկալի և ամենատեղի վայրե-
րը, «գամենարոյսն, գամենարուզն, գամե-
նալին, իրամենագիւտն» են: Անդարգոյն
ձկտեցուցանելով նայուածքը, կիսաբոյր Նը-
րսիսի հովտէն, Սիւնեաց աշխարհի անտա-
ռախիտ լեռներէն մինչեւ կասպից Ծովն,
Գեղարքունիքն՝ Սեւանայ լճով, ակնապա-
րար տեսարաններ ամէն կողմ կը հանգըս-
տացնեն սիրտը և հպարտութեամբ կը լե-
ցընեն, իբրեւ կատարած յաղթանակի մը՝
չորս հաղթ և Հինգհարիւր մեղր բարձունքի
վրայ արքայօրէն բազմած: Եւ ոչ ի զուր,
քանզի բոլոր սարերն պակակած և մէջ առած
Շիրակայ դաշտն, կազմէին մեծ մատանի մը,
որոյ ակն պերճափայլ կազմէր Արագածը.
և այդ փաղփուռ լուսոյ մէջ մեր փոքրու-
թեամբ ամենեւից բարձրն էինք, թերեւս մեր
մտքի մէջ տէր և տիրական մեր դիտած ու
լորտին: Խոնարհութենէ այսքան բարձրու-
թեան հասած մեր ոտքով, շեկաւ փորձին
երկրպագութիւն մուրալու, աշխարհի թա-
գաւորութիւն տալու խոստումով. վասն զի
այն ժամուն և այն յափշտակութեան մէջ,
մարդու առաջին մտածութիւնն է թէ՛ «սը-
նոտի է անցաւոր մեծութիւնն» և տիեզերքի
յաւիտեական կեանքի համեմատութեամբ՝
մարդունը «երազ է և սուտ պանուճանք»:
Մենք զմեզ բարձրացուցեր էինք, ուրեմն
հարկ էր խոնարհիլ և այն առնին կրկին
«հոգե աշխարհիս և պատրանք մեծութեան»
պիտի մտենն սրտերու մէջ և հեղձուցանեն
այն վսեմ և հրապուրիչ տպաւորութիւն-
ները, զոր հոգին կը ծծէ՝ օդոյն մաքուր-
թեան հետ՝ մաքրապոյն զաղափարներն եթե-
րական աշխարհէն:

Ոչ ոք պիտի կարծէ որ մենք աղաւնոյ
թեւերով կամ օդաթռիչ սաւառնակով ելանք
թառեցանք Արագածու կատարն, ուստի
հարկ է ցուցնել բարի ընթերցողին այն հա-
նապարհը զոր կտրեցինք և բազում նեղու-

թեամբ ելանք ի կատարն, վայելիլու այն հանգիստն:

Մեր պատրաստութիւնք տեսանք Քաւթարի գիւղում, զոր 1812 թ. Հիմնեցին Նազապետեան երկու եղբայրներ Տէր Պետրոս

ասոր տակէն քերելով կտրեցինք խաչաքիւիսէն և սկսանք բարձրանալ դէպ ի Պաշգեղի եայցին ամարանոցը: Մինչեւ ցայս վայր մշակուած են գետիններն և առաւելապէս գարի կը ցանուի. մօտաւորապէս 2500-3000



ԵՊԱՆՆԵՐԻ ԵՒ ՏՈՒՆ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ. — Լուս Հ. Գ. Նաճուպետ.

և Լեւոն: Աստից մեկնեցանք մեր արշաւանքին դէպ ի Արագածն: Այս ճանապարհը երկիցս և երկիցս կտրած էինք, ուստի ծանօթ ուղիով շարժեցինք ձիերն. անցանք Պարնի գիւղէն՝ տուինք Ղփչաղու-Հառիճոյ ելն,

մեզր բարձրութեան վրայ ենք, որով երբ ձիւնն կանխէ սեպտեմբերի սկիզբներն արտերը կը մրսին. բայց մեր գնացած տարին տաք էր և արտերն առողջացած, տեղ տեղ նշմարեցինք արլու հետքեր, որոնք անյա-

1. Սորա բնիկ եղած են Դերջնու Մամախաթուն գիւղացազայն, որոց բնակչաց մասին Ազաթանգեղոս լատ բարեացակամ կերպով չի խօսի «Խողջրագոյն և Խեցրեկագոյն բարս հեթանոսութեան լըջել ի զգաստութիւն»: Մամախաթուն որ է Բագայտաթինճ, զիստար մե-

հնաւորեցիներն մէկն էր, Արամազդի որդւոյն Մինրի նուիրուած (Վրացերէն Հօր պատկեր կը նշանակէ, որ է Հօրամոյճ (Արամազդայ)): Այս մեհեանք շինեցին յոյն քուրմերն, զորս Տեգրան մեծն կոտց արմաններու հետ Հայաստան կը փոխադրէր: Խորհնացին այս անդեկու-

գութեամբ տրորել էին գարիքը: Խաչաքի-
րիսու և Պաշգեղի եայլեցէն վեր գառիվերն
երթալով կը մեղմանայ մինչեւ հասնի Չիա-
րաթ կոչուած սրածայր ոստ մը, որ քրդե-
րու համար ուխտատեղի է: Ասկից այն կողմն
Երեւանու քոչուոր քրդերու խորանըն (ա-
րտատեղի) են: Չիարաթու ուղղութեամբ
մեծ շափայի (ձեան կուտակ) Հանդէպ Ճա-
մալի քրդերու վրաններն էին, ապա սարա-
հարթ մը ընդարձակ մինչեւ լեռան պալար
մը, որոյ ստորոտն և դաշտը կը կոչուի
Չիքանի (քառասուն աղբիւր) ցրել զարկած
էին քրդերն իրենց վրաններն, ոչխարի հո-
տերն տարածուած կակուղ կանաչ դաշտի
երեսն, յորացած գիրացած կ'արածին և ու-
կագոծ բերանով կ'որոճան: Կարելով այդ հո-
վասուն սարահարթը, ուր կարելի է աշխար-
հիս լաւագոյն Ապաքինարանն (sanatorium)
կերտել, բռնեցինք կարաւանի ճամբան որով
Երեւանի կողմէն կ'անցնին մեր կողմը ու-
ղեւորներն և շատ անգամ հայրաժիներ, գո-
ղեր, աւազակներ եւս: Այս ուղին կ'անցնի
Հասան Խանի կոչուած կօյի (ճի) եղեր-
քէն, որի մասին հիացումով դեռ կը խօսի
Ժողովուրդն: Սակայն ինչպէս առական կ'ա-
ւել: «բերնէ բերան» դարձաւ գերան» այդ-
պէս Թուեցան մեզ Ժողովրդական զորոյցներն:
Հասանք այդ ճի առաջ, որ էր քարածայռէ
բխած բաւական առատաշուս աղբիւր մը,
որի առջեւ ցածր պատով բանդուած է եղեր
Ժամանակին, այժմ մեծ մասամբ քանդուած,
բխած ջուրն իսկոյն կը հոսի խորանդունդ
Մանթաշի (Հազար աղբիւր) կոչուած ձորն,
որ Շիրակայ քանն և երկու գլդերու ջուր
կը մատակարարէ: Հասան Խանի կամ Հա-
յոց Ժամանակէն, փորձ մ'եղած է այդ աղ-
բիւրի ջուրը սարի լանջերով տանել մինչեւ
Հարաւային երեսը, ուր միացնելով Ատի-

եամանի և Մաստարու ջրերու հետ՝ առողջ-
ւորողութիւն չրկապատող դաշտերն, սկը-
սած Թերեւս Բագրիբարանէն (Չիթեանքով)
մինչեւ Սարտարապատ: Ի նպաստ այս են-
թադրութեան կայ տակաւին պատի մնա-
ցորդներ և ցամաք հարդի (առուի անկողինն)
սարի կողին: Հայոց կարգէ դուրս մանր ջրա-
բաշխութեան արուեստի ընդունակութեան,
սար, դաշտ և ձոր ոռոգելու, վաղուց վկա-
յած է Հայաստան այցելող գերման ճար-
տարագէտ մը: Այս ընդունակութեան փորձն
կարելի է տեսնել երբ ցանուած արտերը
յրելու համար կորիներ կը քաշեն և կորու-
տեղ բայն իսկ շինած են:

Անցնելով ճի առջեւէն ճամբու հետ կը
մտնենք տափարակ կանաչ խոտով Ժածկը-
ւած դաշտի մը մէջ զոր շուրջ կը պատեն
կիսաբուրակ լեռան վերջին կատարներն, ի
միջին կայ բարձրագոյն քարաբլուր մը, ու-
րուն Հայ կ'ասեն և անոր կողէն կ'անցնի
քոչուորներու կարաւանի ուղին: Այդ փոք-
րիկ դաշտաստի միջին օձապտոյտ կը սողայ
առուակ մը ականակիտ ջուրի, որ կը Թափի
Նոյնպէս Մանթաշի ձորը: Այդտեղ իջանք
ձիերուց, առուակի եզերք փռեցինք սեղան
և զրինք հեշտսեռն այն մաքուր ջրով. վա-
յելքն անբացատրելի է, պէտք է գնալ փոր-
ձել ապա հասանալ ինչ է բնութեան սփոփիչ
բաւականութիւնն: Այսպէս հեծանք ձիանքն և
բռնեցինք գողգոթայի ճամբան, ասկից վերջ
վերելք է մինչեւ գագաթն. ճանապարհ չը-
կայ, յաւերժական կողերն լի են լեռնահա-
տոր քարերով, մօտիկ մօտիկ այնպիսի դէ-
զեր կան այն քարերուն, որուն Չընկղններ
կ'ասեն, որոց վրայէն հարկ է անցնիլ ձիով
քարէ քար, ամուր բռնած ենք սանձեր, հո-
գինիս վեր քաշած, ապաւինած ձիերու խո-
հեմութեան և զգուշութեան՝ կը բարձրա-

Թիւնը կու տայ անոնց մասին. «Իսկ ցրմացն զմտա-
սանալ՝ զի մի է Խորագոյն Հայս վարդցին, պատճա-
ռեցան ըզմութիւնս, բրբ Բէ զիքն անդէն կամբ զը-
նակիւն» (Խոր. Բ. Ժ. Դ): Ան մահանն ցարդ յոսին
կայ, տկանտեսք կը վկայեն, կամարկապ բոլորա-
շէն գործարար: Այդ շինութիւնն երբեք պտղանկեր է
Նաւագեղեան ընտանեաց, որոնք պատուազոր անունով,
հոն եղած Ժամանակ Մարտիկեաններ կոչուած են, Շի-

րակ գաղթելէն յետոյ եւս Ժողովուրդի բերանն էր մին-
չեւ մեր օրերը: Տէր Պաշարու քանանն և Լեւոն եղ-
բարք շատ տեղեր, մինչեւ Լոռի պաշտելով՝ Հասանք և
ընտրել են Արագածու լանջերու վրայ զիւրի տեղն, 1760
մեզը բարձրութեան վրայ կարկաչան կամ Ղարանդու
(Խաւան-Ախուր) փռակի եզերքն, հիմնելով իրենց հոս-
տատուն բնակավայրը:

նանք, մինչեւ հասանք բուն կատարների ստորոտն ուսկից վերելքն ուղղորդ է և հոծ մեծամեծ քարերով, արահետ անգամ չկայ: Բարեբախտաբար ի ստորոտ այդ գոմար տակ քարերուն քսան և հինգ, երեսուն սաժէն (60—70 մեղր) կակուղ տեղ գտանք, որոյ խոտն կարճ և թանձր, կանաչ գորգ մը կը թուի, անոր վրայ իջանք, և ձիանքն

խառնարանը — գաղտնիքները հետապնշ դելու, հասկանալու համար: Գիւղի տանս պատուհանի առջեւ ձգուած էր միշտ փառապանծ տեսարանը բարձրակատար խառնարանին. ամէն օր կարծես հանդէսներ կը կատարուէին, տեսարաններ և պատկերներ փոխելով, ամառն մի կերպ, ձմեռն ուրիշ կերպ: Օդերեւութական տեսարաններու առ-



ԱՐԱՅԱՅ

Լոսն Հ. Գ. Նամակետ.

յանձնեցինք Հայրապետի պահպանութեան: Մենք հետիոտն սկսանք բարձրանալ քարերը չէնքելով, գրկելով, մազլցելով սողոսկելով դէպ ի վեր: Մեր իջած տեղէն ուղիղ դժով թերեւս 500 մեղր բարձր կը մնար գագաթն, այսպէս թէ այնպէս կէս ժամի շափ դրինք մինչեւ որ սպիտակ թաշկինակ պարզեցին լուսանկարիս միջի՝ գագաթի վըրայ, ուր մեր աչքին բացուեցաւ այն հրաշատեսիկ տեսարանը, զոր փոքր ի շատէ գծեցինք յօգուածիս սկիզբն:

Երկար տարիներ օրտաւորով երազեցի այս վերելքը, ոչ թէ սնտոի գուարճութեան համար, այլ կարգ մը երկրաբանական դիտողութեանց համար, խորհրդաւոր կուռքի մը — այսպէս կը սիրէի երեւակայել Արագածի

լեւ ալամայ մտածութիւններ և դիտաւորութիւններ կ'ընծայէի սպիտակափառ գըլխին, պսպղուն ճակատին: Երկու կատարներ դէմ առ դէմ կանգնած են ձեռք ձեռքի տուած փեսայի և հարսի պէս. երկուքի բախտն անյուծանելի կապուած է մէկմէկու հետ. դարեր անցեր են անոնց առջեւէն, փոթորիկներ կազմուեր և եղծուեր անոնց գլխին, ազգք և ազինք մեզի պէս, այսօրուան պէս, տեսեր են, զգացեր և սիրեր են, և մրրիկի պէս երեւցած և ապականած անցեր գնացեր են և Արագածն արեւի առջեւ փռուած կը շարունակէ ապրիլ: Գիւթական իմն է դիտել գարնան պարզ երկնքին ձգուած կատարներն փողել պնշներէն, ճակատէն գոլորշիներ և կամաց կամաց թափ-

անցիկ շղարշով պատին, թանձրանալն, ծածկել անտեսանելի սարի զլուխն մինչեւ ուսեր և մնալ նոյն դիրքի մէջ ժամերով. մինչ հորիզոնի վրայ շուրջն արեւ կը սփռէ իւր գուարարար և կազդուրիչ ճառագայթներն, և կապոյտ գգրեթն լինջ և մաքուր ամպերէ: Ինչո՞ւ, կը հարցնեմ, փաթաթեր է զլուխն Արագած, ամփոփուեր մտածականի, ի՞նչ գլխու ցաւեր ունի, թէ անա-գորոյն բախտին դարման խորհուրդի ժողովեր անցած գացած սերունդներու, քա-լերու ոգիներն, որոց բնակութիւնն մեր նախնիք զնուծ էին սարերու կտտարին, ան-մատչելի և սուր վայրերում, ուր թիւ թըւ-չնոյ և ոտք մարդկան չեն հասնիր: Մի քանի ժամէն մշուշն, մառախուղն կը սկսէր քան-դուիլ, անօսարնալ և ցնչիլ, կը բանար կա-պոյտ և զուարթ աշուին, ինչպէս առաւօ-տուն կարմափնիկ երեսով կը բանայ քնէն գեղածիճաղ աչքերը մանուկն որդանի: Մի ուրիշ առաւօտ, երբ հաճոյական լերմութիւն կը բարձրանայ երկրի երեսէն և օդն հան-դարտ որ և ոչ ծառի մի տերեւ կը շարժի, երբ ասեմ կենդանաբար արեւն դեռ էջ վեր-մագուցած օդի խաւերն, գեղջուկ տան ծուխն նոր վառած թոնիրէն կը բարձրանայ իրրեւ ստեղծն, նըրազդոյն քալարներով կանաչ առ-տերու հեռանկար պատտառին վրայ: Ալը-տազբաւ է յոյժ, յուշաբեր մանկական խա-ղաղ և երջանիկ օրերու, ընտանեկան կենաց քաղցրութեան յիշեցուցիչ, աւետարբեր դար-նան և տօնական օրերու, արուորական հանդէսներու կարապետս կամակար և ան-ձուկ գթով յիշում է ամէն հայրդդի, իւր մէկ սիրելագոյն թագաւորի սրտառուչ հա-ռաչանքն յետին ժամու, թերեւս անդառ-նալի օրուան, նոյնչափ իրաւացի և զգա-ծուած. «Ո՛ր տայր ինձ գծուի ծխանի և զգաւաւտն Նաւասարդի» իմ հայրենի եր-կրին, իմ տան և տոհմի վառարանին, ուր որ ալ գտնուի, որ օտար աստուի տակ և որ Բարեկունի գետի ափերուն: Մինչ մեր սըր-տերն տխրին և Ձիւնն. միայն Արագածն

չաքարահամ (sucré) ծերութեան ժպտով հասկացնել կու տայ իմաստունին պատգամն. Ազգ երթայ և ազգ գայ և ես յաւիտեան կամ: Արդարեւ քառասուն դարեր յառաջ երբ Հայկ Նահապետ ապահովեց երկրին խաղաղ տիրապետութիւնը Հայկայ որդի-ներէն, Արմենակ իւր անունը դրողմեց իւր-սխալյին լերանս վրայ, և ասոր հիւսիսի թի-կունքը՝ բերրի և արգաւանդ դաշան, իւր որդւոյն Շարայի՝ թէ Գուշարայի ժառան-գութիւն տուաւ. Ժողովուրդի աւանդութեան մէջ անցաւ Շարայի անունով և գաւառն Շիրակ կոչուեցաւ Շատակեր էր և յորո-վածին, կ'աւաճ առաւապելն. որով գեղջուկ-ներու բերանը առակ եղած էր ասել. «Թէ՛ Գուշարայ որկորն է, մեր Շիրակայ ամ-բարքն չեն՝»:



Արագած լեռն անունն, ինչպիսի և իցէ լեզուական օրէնքով՝ կապուած է Արմենակ Նահապետի անունն հետ: Պատմութեան սեփականութիւնն է, աւանդուած Մովսէսի Խորենացւոյ ոսկեղինիկ մատենկան մէջ: Ուս-կից գտեր, ուսկից հաւաքեր է անունները Հայկազանց սերունդներուն. մարդիկ եղած են թէ Ղի՛ք, Փա՛լեց, գերմարդկային էակ-ներ, կամ բանաստեղծներու գիւտ. կամ ըստ Սէն Մարտէնի «Ստոյն Մ. Խ. ստեղծագոր-ծութիւն», կամ ըստ արդեայոյ՝ Առաւապեա-րանութիւնը, մատենագրական գոգութիւնը: Բայց որ գործանալին է, ինքն իսկ Խորե-նացին գուշակեր էր արդէն վերջին տարի-ներուն յիշտիկոսներու «Փննական պատմու-թիւններն» և որ ըստ արդիական «Ըռտա-րանութեանց» զինքը ստեղծ, զինքը հերքե-լը, զինքը ագիտի տեղ զինքը և ասոնց հե-տեւանք ծաղրածութիւններ. բայց Խորնոյ Մերունին որ ինքզինքն արժանի կը համարի հին հին դարերու պատմագրողներու, վի-պասաններու, Ժողովուրդական հաւաքածոյն եր-գերու, աւանդութեանց ընագիրներն կար-գալու և անտի քաղելու իւր պատմութեան

1. Թէ քո Շարայի. — Խոր. Ա. Ժի. — Շարայի սնունդ և Գուշարայ. Բ. Դ. — Իսկ Գուշարայ որ

յորդայն Շարայի. Բ. Ը. — Տառապա ունի որ էր յազգէն Աշոցած է գաւակէ Գուշարայ. Բ. Հը.

հում նիւթերն, յետ իւր անձի ծերութեան չքմեղանքն կարգալու, դառնալով մեր ժաւմանակակից գիտուններուն կ'աւէ բարեսըրտութեամբ: «Թող ուրախանայ իւրաքանչիւր քննողի և դատողի միտքն՝ կարգալով իմ գրածներն»: Սակայն խորենացին եղած է, կայ և պիտի մնայ անսպառ բովբ մը բնւեալագրական պատմութեան, նա պիտի ծառայէ իրբեւ ճրագ լուսատու եւրոպական և ազգային գիտնոց լուսաորելու քառասուն դարերու մէջ կատարած պատմական անցքերու հետազոտութիւններն. նա պիտի գծէ Ուրարդական ցեղի յառաջխաղացման հետքն, Միւրագետքի դաշտավայրէն անցնելը, այլ և այլ ճանապարհներով, Հայաստանի բարձրավանդակն, նա պիտի տայ իւրաքանչիւր ցեղի հաստատած բնակութեան վայրն, նուաճումներն և ժառանգութիւնն, նա պիտի տայ այդ քաղաքականացած ազգի աշխարհագրութեան և անձինքների անուններն. յաւագոյն ճշգրտայն կարողացած Բիւռոսի կամ Բերսոսի և կամ ուրիշ առեղծուածային անուն կամ անանուն պատմագրի մէջ, քան ինչ որ ուշիմ գիտնականներն հարկւր տարուան չըլանի մէջ փորձեցին կարդալ քարերու երեսին վրայ քանդակուած պատմութիւններ, փոքր մի յարմարցուցած, փոքր մի ծոռած և փոքր մի բուն ստեղծած անուններով: Որինակի համար, մեր գիւղից երկու մղոն գէպ ի վեր կայ Ղուլիճան գիւղը: Մօտը բերդի մը մնացորդ հազիւ կը նշմարուի ժայռերու գլխին, անոնց երեսին ձորի մէջ, ուսկից կը հոսի Կարկաշան, կայ սեպագրի մը: Նիկոլսկի իսկոյն սեպագրի մէջ կարդում է «Կուլիճան» - Նոյնն իմ ներկայութեան կարգաց Բեւբ գերմանացին: Հարկ է ստեղ որ Ղուլիճանն - Կուլիճանն նոյն են գոյլի հետ և հին մնացորդներն զայդ կ'արդարացնեն - Ուրբան ապահովուութիւն կրնանք ունենալ միւս անունների ըն-

թերցման մասին: Անշուշտ ըստ արդի լուսարանութեան Հայոց պատմութեան գրողներն, պիտի չծիծաղին մեր վրայ, եթէ ասեմք, որ խորենացիի մեծութիւնն, հանահարն և գիտութիւնն այն ատեն պիտի երեսն ելլէ իւր իսկական արժէքով, երբ սեպագծեալ արձանագրութիւններն անսխալ կարդացուին, և ազգային ու օտար գիտնականներու պեղումներն կատարուին պատմական տեղերու վերայ, զորս յիշում է խորենացիի Յուսալի է մինչեւ սեպագրի գրակաւութեան երկրորդ հարիւրամեակն, Թաղէոս Աւգալթեկեանի և Օձաբերդի, Փոլաղոսի (Նըլան-Ղուսն, Վիշապաքաղ?) արձանագրութիւնների ընթերցումը Հնա. Պաճ. Կոմ. ՕՐԱԳՐԻ Թ... մէջ, փոխանակ խուժուած Ռուսա, Սարգուր, Արգիշի ևն. անուններին, և ոչ այլ ջարդող, գերող, քանդող հրէշների, այլ տան մեզի հաճոյալուր Գեղամի, Սիսակի, Վահագնի անունները, տընարար, լինարար, խաղաղակեաց Տանուտերի, մարդկութեան բարերարների, որոնց կամակար հնազանդում են յառաջագոյն ցըրուած և այն տեղեր բնակած արդկային սերունդներն, Հայկ Նահապետի գալէն յառաջ, ըստ բանից պատմահօրն:

Ոչ միայն հիմնախոսութեան յիշատակներով սիրելի է Հայուն Արագած լեռը, այլ և Քրիստոնէութեան չըլանին եւս ունի իւր առանձնաշնորհութիւններն, որոց մէջ առաջին տեղ բռնում է Գրիգոր լուսաւորչի լուսած և կախած կանթեղի բարեպաշտական աւանդութիւնն, որպէս թէ շատեր տեսեր են... Բայց մի բան արդարեւ հետաքրքրում է հեռաւորներին երեւակայել այդ լոյսը և ճրագը, որի համար, Սիմոն Կաթող. Մաշտոցի պատկերի տակ գրուած է.

«Լեռն Արագած տուն սրբութեանց
Լուսաւորեալ լուսով անանց»:

Հ. Գ. ՆԱԶԱԳԵՏԵԱՆ

1. Եւ Կրթիւ (Հայկ) բնակէ ի Լեռնոսի միում ի դաշտավայրի, յորում առկաւ ի մարդկանէ յառաջագոյն զբուռնոցն դադարեալ բնակէին, զորս նապանդ իւր տրբաւ Հայկ: Ա. Ժ. — Բնակեալ յառաջագոյն արջ սակաւ ինքնակամ հազանդէ Գիւնգղին: Ա. Ժ. —

Բայց սքանչելի իմ ասէ Պատմագիրն, թէ ի յուրմ տեղիս զիս զտան բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիւր սակաւ, յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնոյն Հայկայ: Խոր. Ա. Ժ: